

334  

---

9-68

25. 794

17 FEB 2010

320 .03. 2013

1213-930 ալ

68

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ԻՆՉՊԵՍ ՅԵՎ  
ԻՆՉՈՎ Ե ՈԳՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՑՈՒՆ

Կյուղատնտեսական կոոպերացիան անընդհատ կրիվ մղելով գյուղում մասնավոր կապիտալի, սպեկուլյանտի և կուլակի դեմ՝ ձգտում է ազդպիսով ապահովել գյուղացիության շահերը: Սա առաջին:

Կոոպերացիան գործնականում կիրառելով հողի մշակման լավագույն ձևերը, առաւածելով գյուղում կատարելագործված մեքենաներ և գործիքներ, ընտիր սերմեր ու ազնվացրած անասուններ, հանրային պարտապարտքիչ նյութեր և այլն, նպաստում է գյուղացու սեփականության բարձրացմանը: Սա յերկրորդ:

Յեվ յերրորդ ու ամենազլխավորը՝ ի մի հավաքելով գյուղացու անտեսության արտադրության նյութերը, (հացահատիկ, յուղ, ձու, խաղող, ծխախոտ, բոժոժ բամբակ և այլն) մեծ քանակությամբ արտահանում է գանաղան շուկաներ և վաճառում ամենաբարձր գներով:

Այսպիսով գյուղացու քափած աշխատանքը վաճառելով յեվ հասուցվում է լիովին: Իսկ դա, ինչպես բոլորս էլ գիտենք, գյուղացու համար շահագանց մեծ նշանակության ունի իր միջերթների լիակատար գնահատումով, գյուղացին հնարավորություն և ստանում էր անտեսության կարիքներն ամբողջովին հագուլու:

1003  
11600

Բայց ինչ է արել այդ ասպարիզում գյուղատնտեսական կոոպերացիան:

Ռուսաստանում գյուղացու անսեսություն արտադրության նյութերը կոոպերատիվների միջոցով վաճառքի հանելով, թե յերկրի ներսում և թե արտասահմանում, պարզված է, վոր այս ընթացիկ տարած գյուղացին կոոպերատիվին հանձնած յուրաքանչյուր մեկ փութ մթերքի համար, բացի իսկական արժեքից, ստանալու յի նաև լրացուցիչ վարձագուրջուհ, վաճառքից գոյացած ոգուհից:

Այսպես կոչվող, կոալանտան վերածչակող կոոպերատիվների կենտրոնը Ռուսաստանում (չնոցենար) վորը համախմբած ունի իր շուրջը բոլոր կոալանտան արտադրողներին, կարողացել է լրացուցիչ վճարել յուրաքանչյուր մեկ փութ կսածահասի համար մեկ ուլբի, վորի ընդհանուր գումարը կազմում է 200 հազար ուլբի:

Այստեղ հարց է ծագում, արդա ուժ գրպանը դեռ և մտներ այս պատկանելի գումարը, յեթե գյուղացին իր կոալանտանը վաճառք վոչ կոոպերատիվների միջոցով, այլ մասնավոր միջնորդ առևտրականների ձեռքը ձգեր: Պարզ է, վոր բոլոր պիզ ոգուհներ պե՛տ է գիզվելին մասնավոր սպեկուլյանտների յե՛վ կուլակների առանց այն էլ հաս գրպաններում, իսկ գյուղացու գրպանը պի՛տի գնալով ցվազեր:

Իսկ քանի վոր այդ հավելյուղ վճարները միում և իր՝ արտադրողի գրպանում, դրա համար էլ նա հրնարավորություն և ստանում այդ գումարներով ձեռք բերելու իր անտեսություն համար անհրաժեշտ մի քանի պարագաներ:

Անա թե ինչու, յերեք ամսվա ընթացքում (հունվար, փետրվար և մարտ) Խորհրդային միություն գյուղատնտեսական կոոպերացիան անտեսելով գյուղացու համար միջոցներ, կարողացել է բաց թողնել գյուղացիությանը, գյուղատնտեսական մեքենաներ և գործիքներ, մոտ 2 միլիոն ուլբու, այսինքն մոտավորապես այնքան, վորքան յեղել է ամբողջ 1923 թվի ընթացքում: Այսպիսով գյուղատնտեսական կոոպերացիայի շրջանառություն գումարը, մթերքների վաճառումից և ինվենտարի մատակարարումից, անցած 1923 թվի ընթացքում կազմում էր 173 միլիոն ուլբի, վորպիսի գումարը, մեր անուժ յերկրի ադրատությունը նկատի ունենալով, կարելի յի համարել բավականին պատկանելի գումար: Սկզբնական կոոպերատիվ միավորները, տեղական միությունները և կոոպերացիայի կենտրոնը (Սելսկոտյուզ) ճաչում են այդ շեջանաուրյան վա փոչ վարպես մեծ ոգուհներ սահալու սիջոցների, այլ վարպես գյուղացու սե՛ստարյան արագուրյան բարձրացման միջոցի՝ մասալարուելով գյուղացուհ անհեթեթս մեկնաներ, գործիքներ, սերմերայ, գեղորայ, պաբեսացուցի նյութեր յե՛վ այլն: Անա կոոպերացիայի հիմնական նպատակը:

Ինչպիսի ճանապարհներով է հանում այդ նպատակին, գյուղատնտեսական կոոպերացիան. բերենք մի քանի որինակներ:

Վերջիննք մեր գյուղացիության հիմնական մրթերքը՝ հացահատիկը և տնտեսք թե ինչպես է գործազրվում:

Աշունը գյուղացու համար աննսածանը ժամա-

նստին եւ Առանձնապես այդ զգալի յե թուլլ և միջակ  
 անտեսությաննիրի համար: Այդ ժամանակ է, վոր կու-  
 տակվում է գյուղացու բազմապիսի կարիքները՝ ձեռք  
 բերել ձեռնակա պաշար, մանուֆակտուրա, անասուն-  
 ների կեր, վճարել հարկերն ու տուրքերը և այլն: Իսկ  
 իսկ դրա համար հարկավոր է վաճառել հացահատիկը,  
 վորպեսզի ստանա անհրաժեշտ գրամը: Իսկ ինչպես  
 գիտենք, տարվա այդ յեղանակին հացի գինն ընկած  
 է յինում: Կարող է ուժեղ անտեսությունները իու-  
 սափում են այդ ժամանակ վաճառել իրենց մթերքնե-  
 րը, սպասելով գների բարձրացմանը: Իսկ ազգատ և  
 միջակ անտեսությունները ուզեն—չուզեն պիտի վա-  
 ճառեն: Ահա այստեղ է, վոր հանգես է գալիս գյուղի  
 կուլակը և սակեղուլանոր, կես գնով ձեռք բերում աղ-  
 բատ գյուղացիության հացահատիկը, շատ անգամ գե-  
 չհավաքած և այդպիսով հարստանում է հաշիվ աղ-  
 բատների:

Ինչպես ազատվել այս չարիքից, հարկավոր է  
 խմբվել կոոպերացիայի շուրջը, հարկավոր է անդա-  
 մադրվել նրան: Կոոպերացիան գյուղում գործառնու-  
 թյուն է կոտարում հացահատիկի գրավականով: Գյու-  
 ղացու մուծած հացահատիկի գիմաց նա տալիս է ա-  
 վանս և անգորրազրեր (կվիտանցիա): Կոոպերատիվը  
 այդ հացահատիկը հախաքում է, ամբարում, մաքրում,  
 տեսակների բաժանում, վորպեսզի ձեռնառ վաճառի-  
 մենք գիտենք, վոր անմաքուր հացահատիկը աման է  
 գնահատվում, և ապա աշնան վերջերին կամ ձմռան  
 սկզբներին, այսինքն յերբ հացահատիկի գինը կայուն  
 է դառնում, մեծ պարտյաներով արտահանում է և  
 վաճառում: Այդ գործառնությունից գոյացած գույք ու-

գույքը, նորից բաժանվում է հացահատիկ ավուղներին՝  
 համաձայն նրանց տված հացահատիկի քանակի:

Յեվ վորովհետև ամեն մի հավելյալ կուպիկ գյու-  
 ղացու համար մեծ նշանակութուն ունի, հետևաբար,  
 գնալով—գյուղացու անտեսությունը բարելավվում ու  
 բարգավաճում է:

Իսկ յեթե նայելու լինենք Լոռու կաթնատնտե-  
 սական արտելների գործնեյությանը, կտեսնենք, վոր  
 գյուղացին կաթը արտելին հանձնելով, յերեք անգամ  
 ոգուտ է ստանում, քան թե նա կվաճառեր մասնավոր  
 գործարանատիրոջ կամ կվերամշակի ինքը:

Առաջին, վոր արտելը հիմնելով ցեղական կովերի  
 բազմացման կաշաններ և մացենկով գյուղացու անտե-  
 սության մեջ խոտաբույսերի սերմնափոխություն, գրա-  
 նով իսկ բարձրացնում է կովի կաթնատուլությունը:  
 Յերկրորդ, արտելի կաթնատնտեսական գործարանը  
 բարձրացնում է կաթաչին մթերքների վորակը, պատ-  
 բասում է շվեյցարական, թուշի ընտիր պանիր և  
 հաջող կերպով վաճառում է Հայաստանի և թե Խոր-  
 հըրդային այլ Հանրապետությունների շուկաներում:

Որինակի համար, մենք գիտենք, վոր Թիֆլիսում  
 Վարանցուկայի յուղն անհամեմատ ավելի թանկ է գնա-  
 հատվում, քան գյուղացու սովորական յուղը և այլն:  
 Իսկ մթերքը ձեռնառ գներով վաճառումով, գյուղա-  
 ցին ստանում է ավելի մեծ գույքար:

Այն շրջաններում, վորտեղ շատ զարգացած է  
 գեանախնձորի մշակութիւթը, այդ շրջաններում կոոպե-  
 րացիան մատակարարում է լավ տեսակի սերմեր, կա-  
 բող և հիմնել ուրայի, ալյուրի և գեանախնձորից ըս-  
 տացվող շարքային նյութերի (պարսկա, գլյուկոզա և

դիկտարին) գործարաններ և ելեկտրակայաններ և այլն: Վերջին տարիների ընթացում Ռուսաստանում այդպիսի գործարաններ և կայաններ կառուցված են Մուրոմ-Մելիտոպոլսկի շրջաններում, Վլադիմիրսկի և Գոմելսկի նահանգներում: Իսկ մեզանում Ստեփանավանի շրջանի «Աշխատավոր» կաթնարտել և յուղի արտադրողական արտելը կառուցել են իրենց կարեքների համար փոքրիկ ելեկտրակայաններ: «Աշխատավոր»-ի ելեկտրակայանը հարմարեցրված է և արդյունաբերութան և գյուղի խրճիթների լուսավորության համար:

Ռուսաստանի մի քանի շրջաններում գյուղկոոպերացիային հաջողվել և գեամախնձորի սերմի ընտրութանը և հողի նորագույն յեղանակի մշակութի միջոցով, մեկ ղեսյատինի բերքը հասցնել 2000-ից—2500 փութի:

Ի նկատի ունենալով, վոր գեամախնձորի միջին բերքը մեկ ղեսյատինից հաշվում է 500 փութ, պիտի ասել, վոր Շուշպի գյուղատնտեսական կոոպերացիան մեծ հաստջաղիմուծյուն է ցույց տվել այդ ասպարեիցում:

Գյուղկոոպերացիան մթերքների ձեռնուռ վաճառքը և գործիքների ու մեքենաների մատակարարումը, կատարում է գյուղատնտեսական մյուս բոլոր մասնաձյուղերի նկատմամբ: Ինչպես որինակ՝ բամբակի, խաղողի, պտուղների շերամի և այլն:

Հիմա մեզ կարող են հարցնել — գյուղատնտեսական կոոպերացիան ոահմանափակվում է արդյոք միայն մթերքների վաճառքով, մատակարարումի և արտադրողականութան ձեռնարկների կառուցումով: Ել ավելի ասաջ և անցնում: Պատասխանը կլինի

հետևյալը: Գյուղատնտեսական կոոպերացիան իր կարևորագույն նպատակներից մեկը համարում է մեքենաների մուտքը գյուղում: Բայց մեքենան թանգ է: Գյուղում դրամը քիչ է: Գյուղացու ուժը չի պատում: Վերցնենք որինակի համար օաբացան մեքենան. մեկ տնտեսութան համար, վորը մշակելու յե 2—3 ղեսյատին հող, բոլորովին ձեռնուռ չի շարքացան մեքենա գնելը, վորովհետև 2—3 ղեսյատիններից տնտեսում սերմը հաղիվ 20 տարվա ընթացքում հատուցանի մեքենայի արժեքը, իսկ այդպիսի ծախքին գյուղացին չի կարող դիմանալ և վոչ ելայդքան ժամանակ սպասել: Իսկ յեթե 10—15 տնտեսություն միանան և մեկ շարքացան մեքենա ձեռք բերեն, պարզ է, վոր նորա միասին կմշակեն մոտավորապես 30—40 ղեսյատին, հեակաբար տնտեսում սերմերով մեքենայի արժեքը կհանեն մեկ կամ յերկու տարվա ընթացքում: Նույն պայմաններով կարելի յե ձեռք բերել տրակտորներ, կալսոկ մեքենաներ, սերմնազոտիչներ և այլն:

Գյուղատնտեսական մեքենաների մուտքը գյուղում և նրանից, սգտվելու հնարավորությունը հեշտացնելու նպատակով, գյուղատնտեսական կոոպերացիան կազմակերպում է մեքենաներ ձեռք բերող ընդերություններ և վարձու կայաններ: Վարձու կայանների թիվը ներդալուծու Ռուսաստանում համարում է 10 հազարի:

Հավաքական յեղանակով մեքենաներից ոգտվելու նպատակով հիմնված ընդերությունները ոգտվում են հետևյալ արտանություններով:

ա) Արժեքի  $\frac{1}{4}$ -ի վճարումով ստացվում է մեքենաներ:

բ) Մնացած արժեքը վճարվում է 3 ամսվա ընթացքում, տարեկան 3 նվազ:

գ) Ապառիկ մնացած գումարից գանձվում է միայն 12<sup>0</sup>/<sub>0</sub>, իսկ շատ դեպքերում դեռ ավելի պակաս:

Մեքենա գնելու համար գյուղացին դրամ չունի, աճա ալատեղ է, վոր գյուղատնտեսական կոոպերացիան ընդառաջ է գնում՝ բացելով գյուղացու համար օժան վարկ: Այդ նպատակի համար կազմակերպվում են գյուղացիների կոոպերացիաներ: Վորոնք վարկավորում են իրենց անդամներին՝ ձեռք բերելու լծկաններ, գործիքներ, մեքենաներ, սերմորայք, գեղորայք, կովեր, նյութեր շենքերի վերանորոգություն և այլ նպատակների համար:

Ապա վճարելից վարկային ընկերությունը ձեռք կրերի հարկավոր գումարները, առանձին տնտեսություններին վարկավորելու համար:

Նրան ոգնություն է գալիս կառավարությունը՝ մեր գյուղատնտեսական բանկի միջոցով յերկարատե և կարճատե վարկերով: Բայց մեր կառավարությունը դեռ այնքան հարուստ չէ, վոր կարողանա արամագրել այնքան գումար, վորպեսզի բավարարե գյուղացու բոլոր կարիքներին: Հետևաբար վարկային կոոպերատիվը պետք է նենվի և իր անդամների միջոցների վերա: Նա դեպ իրեն պետք է քաշի անդամների միջոցները փայտավճարների և ավանդների ձանայարձով: Պարզ է, վոր այդպիսի կոոպերատիվները կունենան լիակատար հաջողություն միայն այն ժամանակ, յերբ 1) կոոպերացիվը գյուղացիության լիակատար վստահությունը վայելի 2) առանձին շքն-

սեսությունը վաղաժամիս կոոպերացիվի միջոցները գգույց բաշխվի 3) միմիայն վորկը սովի արագրական նպատակների համար, վորպեսզի ապահովված լինի վարկի նեա ստանալը:

Աճա այս ուղղությունը է դարգանում գյուղատնտեսական կոոպերացիան:

Յուրաքանչյուր գյուղացու համար պարզ պետք է լինի, վոր ժողովրդական տնտեսություն վերականգման համար գործադրվող այս նակա աշխատանքը կոոպերացիան կարող է տանել միայն այն դեպքում, յերբ նենարան ունենեա գույքացություն լայն մասնների ինքնագործնելությունը:

Յուրաքանչյուր գյուղացի պետք է դանա կոոպերացիայի ուժեղ սյունը, և այսպեղ նրա համար պետք է ձգվի միանգամայն ուղիղ ճամբա՝ բոլորը աշխատավոր գյուղացու համար — վոչինչ կուլակի և սպեկուլյացի համար:

Ընկեր գյուղացի! վոր կդնաս դեպի աջ՝ կնկենս վաշխատու կիրակոսի ճանկը, կգնաս դեպի ձախ՝ կնկենս կուլակ Մարկոսի ճանկը:

Հարկավոր է գնալ ուղիղ ճանադարձով, առանց շեկումների դեպի կոոպերացիան, վորտեղ գու կիբրկվեա և կլսես կիրակոսների ու մարկոսների վայնասուներ ու ճիչը, վորովիտե առանց քեղ նրանք կյանք չունեն, ինչպես ձուկը առանց ջրի:

Կոոպերատիվ կաթնայի ապուրն էլ քաղցր է:

Քո տնտեսություն արտագրություն բոլոր միկերքները լցրու կոոպերատիվ կաթնան:

Քեղ անհրաժեշտ գյուղատնտեսական մեքենաները, գործիքները, գուլանները և այլն գնիր միայն կոոպե-

բառի վիճոցով, ավել կոպեկներդ պահիր վարկային  
ընկերության գրամարկզում և դու կլինես հարուստ և  
ապահով:

Ստացած վարկերդ ծախսիր բուն նպատակին՝ կվի-  
րադարձնես հեշտ և կտանաս նոր վարկ՝ ավելի շատ և  
ուզածդ ժամանակին:

Գյուղատնտեսական կոոպերացիան, փոխադարձ  
յերաշխարհություն և պահանջում, մեկը բոլորի հա-  
մար յեվ բոլորը մեկի համար:

Սովորաբար վարչություն և խորհուրդ ընտրելուց հե-  
տո անդամները չեն ցանկանում խառնվել կոոպերատիվի  
գործերին. այդպես չի կարելի:

Հետաքրքրվիր, նրա գործերով, ստուգիր նրա հա-  
շիվները, հաճախիր ընդհանուր ժողովներին, քո կոոպե-  
րատիվը կլինի օրինակելի, ոգսավես յեվ ուժեղ:

Մացրու փայլվածարդ, կատուցիր կոոպերատիվ  
չենքը և այնտեղ վառվելու յե կլեկարական լոյսը, իսկ  
հետագայում և քո խրճիթում:

Չկա վատ կոոպերացիա, այլ կա վատ կոոպերա-  
տոր:

Կավ կոոպերատորին փառք ու սխախիվ, վատին՝  
նախատինք:







ԳԻՆՆ Ե 5 ԿՈՊ.

<< Ազգային գրադարան



NL0208662

